

220
2755

85
U-65

1913

7011

269

ՅՈՎԱԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ԵՏՐՈՍԻ ԱՐԲԱՅԻ ՄԷԹԱՍԹԱԶԻՕ

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ ԾԱՐԱԳՐԵԱՑ

ԳԵՐ. ՍԻՐՈՎԲԷ ԴԱԻԹԵԱՆ

ԵՊՕ. ՀԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ Ի ԳԱԶԻՐԷ



2003

ՎԵՆԵՏԻԿ. ՏՊ. Ս. ՂԱԶԱՐ

1913

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

85

Ա- 65

ՅՈՎԱՆԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ՊԵՏՐՈՍԻ ԱՐԲԱՅԻ ՄԷԹԱՍԹԱԶԻՐ

ՔԱՐԳՄԱՆԱԲԱՐ ՇԱՐԱԳՐԵԱՅ

ԳԵՐ. ՍԻՐՈՎԲԷ ԴԱԻԹԵԱՆ

ԵՊՍ. ՀՍՑ ՈՒՂՂԱՓԱՌ Ի ԳԱՀԻՐԷ



ՎԵՆԵՏԻԿ ՏՊ. Ս. ՂԱԶԱՐ

1913

Յայտարարումներն թատերագուծեան

- Ա. Յովսէփ Նախանձ կրեալ յեղբարցն վաճառի:
- Բ. Իշխանացեալ Յովսէփայ յԵգիպտոս՝ ժողովէ զցորեան վասն սովոյն:
- Գ. Գան Եղբարք Յովսէփայ յԵգիպտոս ինդրել զցորեան:
- Դ. Ի կրկին դարձի եղբարց՝ Յովսէփ տայ ծա- նօթս զանձնէ. և վասն կարեաց սովոյն յղէ առ հայր իւր զկարեւորն:
- Ե. Մխիթարէ Յովսէփ զեղբարսն և փարատէ զկասկած նոցին. և ինքն տեսեալ զերիս ծնունդս Եփրեմի մարգարէանայ վասն ելիցն:



57172-ախ

37408-67ա

Գ Ե Ր Ա Ս Ա Ն Ք

Թատերական Տեսարանի

Ա. Յովսէփ գեղեցիկ որդի Յակովբայ ի Հոաքելայ :

Բ. Թանէթէ հագարապետ և խորհրդակից Յովսէփայ :

Գ. Բենիամին որդի Յակովբայ ի Հոաքելայ ,
և եղբայր հարազատ Յովսէփայ գեղեցկի :

Դ. Յուզա՛ որդի Յակովբայ ի Լիայէ :

Ե. Շմաւոն՛ որդի Յակովբայ ի Լիայէ :

Զ. Դաս որդւոցն Յակովբայ Ռուբէն, Ղևի, Իսաքար, Զաբուլոն եւայլն .

Է. Ասանէթ՛ դուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի, զոր առեալ էր Յովսէփ ի կնութիւն :

ԹՄՏԵՐԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Արհեստի Բանաստեղծութեան յօրինեալ՝ ըստ
պատմելոյ սուրբ գրոց ի Յովսէփ գեղեցիկ ի
տալն զանձնէ զճանօթութիւն եղբարց :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յովսէփի և Թանէրի

Յովսէփի. — Տակաւին չէ՛ լրացեալ ամն երկ-
րորդ և ահա՛ գոզցես յամենայն կողմանց տազ-
նապաւ հասանեն մարդիկ յԵզրիպտոս, զոգե-
պահիկն հայթայթել կերակուր:

Թանէրի. — Այդ չէ՛ ինչ ի զարմանալեաց՝ տէր
իմ, քանզի համադարած է սովս:

Ո՛չ ապաքէն և Եզրիպտոս զնոյն անցս ու-
նէր կրել, եթէ չէր իմաստութեան քո գուշա-
կեալ զայս ամենայն, և խնամով զգուշացեալ:

Յովսէփի. — Սակայն ինձ թուի եթէ ո՛չ միտյ ևեթ,
այլ բազմաց է այս պատահար հանդիսից գու-
շակ: Թանէթէ, դեռ ո՛չ դարձաւ ոք ի Մեմփիս
յորդուոցն երբայեցւոց:

Թանէրի. — Ո՛չ ոք, Տէ՛ր իմ:

Յովսէփի. — Առաքեցեր զոք երբէք, Թանէթէ,
դիտել զճանապարհս:

Թանէրի. — Այո՛, Տէ՛ր իմ, առաքեցի, նա՛ յաւէտ
զբազումս, այլ ի նանիր:

Յովսէփի. — Չէ՛ իսկ այնչափ ինչ բացակայ ի Ձո-
րոյն Մամբրէի մերս այս պալատ արքունի.

յօրէ յորմէ մեկնեցան ի մէնջ և այսր՝ մարթ էր նոցա կրկնել զերթևեկ իւրեանց:

Թանկեր. — Ո՛չ կարեմ ես հասու լինել, ո՛վ Տէր, ներեա՛ ինձ, քոյոցդ խորհրդոց: Եւ թուի ինձ՝ եթէ հովիւք ոմանք չիցեն ինչ արժանիք այդ֊ քան հոգողութեան Տեանն:

Յովսէփ. — (առանձին ինքն յիկրեան) Ո՛չ գիտե թանկեր, երբ հարազատ եմ հովուացն այնո՛ցիկ:

Բարեկամ, արդարև ծանր է ինձ լսել ի քէն զայդ կատականս: Ես պահանջէի ի նոցանէ զմանուկն Բենիամին, զվերջին ծնունդ ծերոյն Յակովբայ. և այսմ բանի տեսէ՛ր, քանի դըժուարութեամբ խոստացան նոքա հնազանդիլ:

Թանկեր. — Բայց, Տէր իմ, դու առ մեծագոյն ապահովութիւն զմին ի նոցանէ առ քեզ կալար ի պատանդ: Եթէ այս չիցէ բաւական, ահա՛ և բռնութիւն սովոյն փութացուցէ զնոսա այսր. չունին շուրջանակի զբերրի գաւառս, ուստի կերակրիլ կարասցեն հովիւքն մուրացիկք: Արմտիք ի հող լուծանին ի կոշտ երկրի. և արեգակն ո՛չ ազդէ ինչ ի նոսին ի փըթթել: Չորացան արօտք. նուազի հովիւն, և արօտականք ո՛չ ուրեք: Բարունակք ցամաքեալք և մերկք անպիտանք ի սնունդ: Եւ ահա՛ ամենայն ոք ի հօտս անդէոց յառէ զաչսն,

քանզի ի զուր խնդրէ ընդ ակօսն սևացեալս զնպար պատկանաւոր: Զաղբաղբուն կայ յոտին մշակն անսուաղ: Ի շնորհս իմաստութեան քո՛ Տէր իմ, ի Մեմբիս միայն է առատութիւն հնձոց, և աշխարհ ամենայն զարհուրեալ ի պահպանութիւն կենաց դիմէ յԵգիպտոս:

Յովսէփ. — (մեղմ ձայնիւ) Եթէ ի նախանձուէ եղբարց ո՛չ ևս կեայ Բենիամին, զիմրդ իցէ ակն ունել, թէ նա եկեսցէ:

Թանկեր. — Եւ ուստի՞ ծնանին ի քեզ այդքան հեռաւոր տեղիք կասկածանաց:

Յովսէփ. — Մանուկն այն էր հատոր սրտի ծերոյն Յակովբայ:

Թանկեր. — Բարի ևս է ուրեմն:

Յովսէփ. — Եւ ես ինքն առի երբեմն զճաշակ սիրոյ գորովագութ հօր. և ես ինքն ընդ փորձանցի նախանձու եղբայրական սրտի, զրպարտութեանց և դաւանաց: Գիտեմ իսկ, այո՛ ... սո՛հ, դու ի նա ինայեա՛, ո՛վ տէր երկնից, և նայեա՛ ի նա:

Թանկեր. — Բայց զմէ՛ դու այդպէս՝ Տէր իմ... և է՛ր այդ յուզմունք ի սրտիդ ընդ անձինդ մաքրառին ընդ ճակատագիր մանկան անձանօթի:

Յովսէփ. — (առանձինն ինքն յիկրեան). Յոյժ նմանք եմ արդարև. Բենիամիելն և իմս զի՛նձակք. ի խորսիկն զնորայն զի՛նձակե՛ յոշջ յի՛

նի ինձ և իմս: Օրէնք են այս բնութեան՝ ի գութ շարժիլ ընդ անձն՝ որ կրէ զաղէտս վըշտաց, զորոց և մեր առեալ իցէ զփորձ: Եւ ըստ առածին՝ նմանութիւնն ծնանի զսէր ի սիրտս մարդկան, և քաջագոյն ևս ճանաչի այլոցն վիշտ՝ ի ցաւս սեպհական անձին:

Թանկերէ. — Եւ այս ևեթ՝ Տէր իմ, բաւէ այդպէս վշտացուցանել զքեզ: Ո՛հ, քանի՞ և քանի՞ ճըշմարիտ է. չի՞ք կատարեալ երջանկութիւն յաշխարհի: Եթէ ի յետին նուաստութենէ անցանել ի ծայրագոյն մեծութիւն էր իմն քաղցրախորժ բնութեան, ո՞ այլ ոք ամենևին վայելէր ի նմին առաւել քան զքեզ:

Գերի արծաթագին՝ ըստ դիպաց հասանես առ մեզ: Ընկճեալ ի զրպարտութեանց՝ ի դրունս մահու առ կախաղանօք դեգերեցար: Ապա ի մի նուազ լուսափայլին երկինք անձին քում, և ահա բացայայտին զանձք աստուածեղէն իմաստութեան գուշկեալ առաջի մտաց քոց, որում մեծութիւն՝ զմեծութիւն. և որում մահ՝ զմահ: Եւ քաղաքն ողջոյն քարոզէ զքոյդ նախագիտութիւն: Առ քեզ դիմէ թագաւորն ի դժուարալոյժ խնդիրս իւր, և դու լուծանես զայնօսիկ. առաջի զնես զշարն՝ ընդ նմին և զգարման փաստուն: Ելք իրացն ճշգրտեն զխորհրդոցդ քոց զանստելի ճշմար-

տութիւն. և ահա՛ ամբարձեալ անդէն ի ծառայութենէ բանտին ի բարձ թագաւորութեան. ահա՛ փոխեալ ի գոհար պատուական, ի քղամիդ արքունի և ի պայծառագեղ մանեակ կոճեղք ոտիցդ: Յարքունական բազմեալ ի կառս՝ զգնաս արդէն գերագահ ընդ նոյն ճանապարհ, ընդ որ անցեր երբեմն կապեալ: Լսես շուրջանակի յամենայն կողմանց ձայնել զքեզ փրկիչ աշխարհի, իրաւարար թագաւորութեան և թագաւորին միանգամայն: Երիտասարդ չքեղ և ականաւոր՝ հարուստ գեղեցիկ ծննդովք. օրհնաբանեալ ի յերկրէ և սիրեցեալ ի յերկնից. և թուի թէ չմնայ այլ ինչ տեղի ցանկութեան իմիք. սակայն յայսր ամենայնի վերայ ի սոյն վիճակ անլուր երջանկութեան գտանես պատճառս վշտագնելոյ զանձնըդ: Եթէ իւրաքանչիւր ներքին վիշտ սրտի յերեսս ընթեռնուլ մարթ էր, քանի քանի՞ք, որք ընդ ակամբ հային ի մեզ՝ ի գութ շարժէին ընդ մեզ:

Յովսէփ. — Ե՛րթ դու առ այժմ. ահա՛ զայ հասանէ Ստանէթ: Մի՛ ի մոռացօնս արկանիցես զիմ ակնարկութիւն. եթէ որդիք Յակովբայ և Բենիամին հասանեն, դարձցիս փութով ծանուցանել ինձ յառաջագոյն զգալուստ նոցին: Թանկերէ. — Պատրաստ է անձն իմ առ ամենայն ակնարկութիւնս քո: Մի՛ ինչ հոգասցի Տէրդ իմ:

Ասանկր և Յովսէփ

Յովսէփ. — Թուի թէ աւետաբեր իցէ այսօր նո-
րանշան գալուստ Հարազատիդ:

Ասանկր. — Յամենուստ հնչեն միշտ աւետիք
խնդութեանց, երբ Տէրդ իմ կեայ յանդորրու
և յուրախութեան:

Յովսէփ. — Ի տեսանելս զանձկալիդ իմ՝ տեղի
եսուն ի սրտէս ամենայն խորհուրդք:

Ասանկր. — Մա՛րթ իցէ ինձ արդեօք...

Յովսէփ. — Հանգիցէ՛ նախ սրտակիցդ իմ, և
ապա լուայց՝ զոր ասէն:

Ասանկր. — Մա՛րթ իցէ ինձ արդեօք յուսալ
չնորհս ինչ ի քէն:

Յովսէփ. — Այդ երկբայութիւն ի սրտակիցդ իմ
վշտացուցանէ զիս:

Ասանկր. — Խնդրեմ՛ զի արձակեսցես ինձ զկա-
լանաւորն երբայեցի ի կապանաց իւրոց:

Յովսէփ. — ՉՇմաւո՞ն:

Ասանկր. — Այո՛ որպէս ասացերդ:

Յովսէփ. — Բայց ո՞ր սիրտ սիրաբուղի շարժեաց
զքեզ ի գութ՝ ընդ որ դու ոչ ճանաչես:

Ասանկր. — Եւ ո՞ր արդարութիւն խորհրդակցի
քեզ պարտաւոր կացուցանել զայո՛ր որ չէ՛
քեզ թշնամի:

Յովսէփ. — Եւ դու ուստի՞ զիտացեր թէ իցէ նա
անպարտ:

Ասանկր. — Քանզի ոչ տեսանեմ զմեզս նորա, և
ունիմ՛ աչացս յանդիման զպատիժն:

Յովսէփ. — Ուրեմն քնաս ինչ զաղտնի արդարա-
ցուցանէ զսխալանսդ:

Ասանկր. — Արժանի է գէթ առաւել բարեգութ
դատաւորի:

Յովսէփ. — Սակայն չէ՛ անիրաւութեամբ:

Ասանկր. — Ահ, սիրեցեալդ իմ, առանց գթու-
թեան արդարութիւն փոխի յանգթութիւն:

Յովսէփ. — Եւ զթութիւնն առանց արդարու-
թեան է՛ նշանակ տկարութեան:

Ասանկր. — Հայեաց՛ յօրինակն գերագոյն Լին՛
որ ուղղէ զամենայն: Նա ի վերայ արդարոց և
մեղաւորաց ածէ զանձրև իւր հաւասարապէս.
և կամի՛ զի արեգակն լուսաւորեսցէ զարդարս
և զմեղաւորս համանգամայն:


Յովսէփ. — Որ զհետ երթալ նմին փափագէ՛ առ
ուղղութեան երբեմն վշտացուցանէ, և ի նոյն
սիրէ զվշտացեալն:

Ասանկր. — Բայց ի նշանաց՝ որք երևին արտա-
քուստ, այդ՛ զոր դու արարեր ընդ Շմաւոն,
ներեա՛ ինձ, թուի ատելութիւն և ոչ սէր:

Յովսէփ. — Մի՛ այդպէս արագ դատապարտեր
զիս, ո՞հ սիրելիդ իմ: Բա՛բէ. և զիմորդ յօժա-

Յովս. Գեղեցիկ

32408-67



բափոյթ են մարդիկ ի թիւր միտս դատել
զայլոց արարս, ուր զանձանց միշտ բարի
կարծեն:

Ասակեր. — Եթէ ոչ կամիս ազատել, գէթ հարց
և փորձ լիցի բանտարկելոյն. կարես զլանալ
և զայս:

Յովսէփ. — Եղիցի ըստ բանի քում: Երթայք
դուք ծառայք. ածէք առ իս զՇմաւոն: (Ան-
ծաւօր է ի նմանէ մատնորիւնն ձիւ. ո՛չ
գիտէ երէ եղբայր իմ է ևս, և իշնամի ան-
ձիւն):

Ասակեր. — Այժմ ի բանից նորա, ի շարժուա-
ծոց և ի դիմաց տեսցես եթէ իցէ՞ նա յան-
ցաւոր:

Յովսէփ. — Յնորք են խաբեբայք, Ասանէթ, այդ
ամենայն: Չիք մեր իշխանութիւն թափանցել
ի խորս զաղանեաց սրտին: Տեսութիւն մեր
ոչ անցանէ անդր քան գերեւելիսն. զներքինն
Աստուած միայն ճանաչէ:

Ասակեր. — Բայց յովովիցս հոգի զշարժուածս իւր
այնպէս հոսէ ի մարմինն, զի ամենայն ինչ
հոգւոյն ի մարմնի իբրև ի հայելւոջ տեսանի:

Յովսէփ, Ասակեր և Շմաւոն

Յովսէփ. — (Ինքնիկ առանձիկն) Անս գայ Շմա-
ւոն. ո՞ն երէ կարող շիւեր ևս զմտաւ ածել, քի
Յովսէփ և՛ ևս: Ո՞վ ճշմարտորիշն յաշխտե-
նական. անս ևս ինքն առաջի իշխանորեան
իւնոյ. անս ընբնեւայ ի քակարոյ եղբորն,
զոր ևս ընդ մեռեալս կամեր: (Ապա բարձր
ձայնիւ խօսելով ընդ Շմաւոնի ասի): Յա-
ռաջ մատիր, հովիւ դու:

Շմաւոն. — Խոնարհ և հլու, ո՞ Տէր, յոտս քո...

Յովսէփ. — Կայց ի վեր:

Ասակեր. — Աբի, քաջալերեաց, մի երկնչիր.
հրաման տայ քեզ խօսելոյ:

Շմաւոն. — (Ինքնիկ առանձիկն). Չի՛նչ ձայն,
զի՛նչ կերպարան դիմաց է այս... ընդէր
խռովես զիս, անձն իմ, և զի՞ գրողակի նար-
կանիս... ո՞ քառեւայ յիկնէ զճանարձակոյ-
րիւնս...

Ասակեր. — Է՞ր ոչ խօսիս:

Շմաւոն. — Ո՛չ իշխեմ բնաւ: Նշմարեմ ի դէմս
տեառն իմոյ տեսիլ իմն պակուցիչ՝ որ հար-
կանէ զիմ սիրտ:

Յովսէփ (Ինքնիկ առանձիկն մեղմ ձայնիւ) Են
խայրուածք խղճի, և ո՛չ իմանայ: Հովիւ
դու, զի՛նչ անուն քո:

- Շմաւռն. — Շմաւռն է անուն իմ, գիտես զայն:
- Յովսէփ. — Ո՛ւր հայրենիքդ:
- Շմաւռն. — Երկիրն քանանացոց:
- Յովսէփ. — Անուն մօ՞րդ:
- Շմաւռն. — Լիա կոչի, է աղախին քո:
- Յովսէփ. — Ո՞րք էին նոքա, որք եկին ընդ քեզ
այսր յեգիպտոս:
- Շմաւռն. — Եղբարք իմ են:
- Յովսէփ. — Ե՞ն Յակովբայ և այլ որդիք:
- Շմաւռն. — Ո՛հ... Այո՛, եղեն նմա որդիք և ի
Հռաքելայ:
- Յովսէփ. — Ե՞ն այժմ և նոքա:
- Շմաւռն. — Յովսէփ և Բենիամի՞ն:
- Յովսէփ. — Ուղղութեամբ տօ՛ւր սատասխանի,
դոքա է՞ր սակս ո՞չ եկին ընդ քեզ:
- Շմաւռն. — Փոքրագոյնն ի նոսա կայ առ հօր
իւրում:
- Յովսէփ. — Եւ մի՞ւսն:
- Շմաւռն. — (նշի Աստուած) Մի՛ւսն....
- Յովսէփ. — Է՛հ... միւսն....
- Շմաւռն. — Ո՛չ գիտեմ, Տէ՛ր:
- Յովսէփ. — (ինքնին) Զայն ես քաջ գիտեմ:
- Ասանէք. — (մեղմ ձայնիւ): Ի դարչակն մահոռ
նարխակի:
- Յովսէփ. — Ասա՛ ինձ, եթէ կենդանի
իցէ Յովսէփ:

- Շմաւռն. — Արդէն ողբաց հայրն զմահ նորա:
- Յովսէփ. — Ուրեմն մեռա՞ւ նա:
- Շմաւռն. — Անծանօթ է մեզ վիճակ նորա:
- Յովսէփ. — Կարի՛ անմիաբանք են բանքդ յիւ
րեանս:
- Շմաւռն. — Եւ սակայն ճշմարիտ են:
- Յովսէփ. — Բայց ասա՛ դու ինձ, զի՞ եղև Յով-
սէփայ:
- Շմաւռն. — Ա՛հ... մի՛ հարցաներ զիս վասն
Յովսէփայ. անհնարին վիշտ է ինձ անունս
այս Բովսէփ:
- Յովսէփ. — Թերևս պարտաւոր իցէ միասուց
ինչ:
- Շմաւռն. — Ո՛չ այդպէս, Տէ՛ր:
- Յովսէփ. — Ապերա՛խտ արդեօք առ ծնողն իւր,
կամ թշնամի՞ ձեզ և կամ դարանակալ կենաց
ձերոց. և կամ կարի՛ դառնացուցեալ զձեզ՝
յանձն իւր ձգել արժանացաւ զատելու թիւն ձեր:
- Շմաւռն. — Ո՛չ. այլ մանաւանդ անմեղ... Կա՛յ յա-
ւէտ արդար: Ա՛հ, Տէ՛ր, զորպիսի ինչ խնդրես.
զորպիսի՞ս յուշ առնես ինձ. թող ինձ դառ-
նալ ի բանտ բնակութեան իմոյ: Յանգէտս
արդարև զոգի իմ հարկանես ի խոր: Տեսիլ ե-
րեսացդ կապտէ զիս քանայն համարձակու-
թեանէ. և մէն մի ի իմ ից անտի հարցուածոց
քոց զարթուցա են ի յիս դառնաղէտ յիշա-

տակս աղետալի անցից: (Ապս մեղով ձայնիւ).
 Ո՞հ. Աստուած, բռշի ինձ տեսանել առաջի
 աչացս գնեծոռքիւն եղիկըռոյն այնորիկ, ար-
 դարոյն և ամեղին միևէ բաժանեալ ի նայրև-
 նի գրկաց մատներ ի գերոռքիւն օտարաց:
 Տեսանեմ գրաւն արտասուան, շեւմ գձայն
 նորս: Ողորմ տեսիլ, յիշատակ սգալի: Ո՞հ
 Տէ՛ր իմ և Աստուած... (ապս բարձր ձայ-
 նիւ) Թո՛յլ արա գոնեա՛ դատնալ ի տեղի իմ:
 Յովսէփ. — (իւրեքին առանձիւնն) Փափացիմ
 վստն մխիթարութեան նորս յայտնել նմին
 զանձնս, բայց ո՛ւ... չև է՛ հասեալ ժամն
 այն... Այդ քո շփոթութիւնք ի բանս՝ ճարակ
 ընծայեն կասկածանացս իմոց, որպէս և յա-
 մեցունն եղբարց քոց:

Թանկերի և նոյն առաջիկք.

Թանկերի. — Ահա՛, Տէ՛ր իմ, եղբարք դորին այժմ՝
 իսկ հասանեն այսօր:

Յովսէփ. — Եւ Բենիամին ընդ նոսի՛ն:

Թանկերի. — Այո՛ Տէ՛ր իմ, տես զնա: Է՛ նա
 ինքն՝ որ զկնի ամենեցուն հանդարտաքայլ ըն-
 թանայ:

Յովսէփ. — (իւրեքին առանձիւնն). Ո՞հ մայր

իւ՛, ես ի կերպարան դորին գրեզ նշմարեմ:
 Ընթա՛, Թանէթէ՛, և պատրաստեջիր մեզ
 փութով զտեղան կերակրոյ: Խզեսցին այդ կա-
 պանք Շմաւոնի: Գուք հովիւք փութասջլք
 գալ առ իս, և դռք յուզմունք արեանս մի-
 լիկիք ինձ մատնիւք:

Յուդա, Բենիամին ընդ այլոց եղբարցն,
 և առաջիկք.

Յուդա. — Տէ՛ր իմ, ահա՛ քոյին հրամանք, և
 խոտմունք մեր լցան այսօր: Միւսանգամ
 կամք այսօր յոտս քո յատեան Տէրութեանդ:
 Այդ՝ սրացին յաչացդ կասկածանք, և հաճես-
 ցիս քաղցրութեամբ ընդ նուէրս սրտից մե-
 րոց ընդունել և զորս ածաք ընդ մեզ:

Յովսէփ. — Եւ զԲ՛նչ իցէ այն՝ զոր ածիրդ:

Յուդա. — Զտնկոցն Արաբիոյ զանուշահոտ շի-
 թըն ի մեղուացն գործեալ հանճարեղինաց հե-
 ղանիւթ դեղնագոյն՝ զոր բերաք: Զէ՛ ինչ ար-
 ժանի քումդ վսեմութեան. է աղքատին ըն-
 ծայ յինքեան, բայց պտուղ է քրտանց մերոց,
 և նուէր սրտից՝ ի նշան խոնարհ հպատակու-
 թեան մերոյ:

Յովսէփ. — Հաճոյ են ինձ յոյժ նուէրքն ձեր.

ընդունիմ գայնոսիկ:... Ծնողն ձեր՝ ծերու-
նին այն Յակովբ, պատմեցէք ինձ՝ զինչ առ-
կենդանի իցէ՞ այրն այն բարի:

Յոշոյա. — Տակաւին, Տէ՛ր իմ, կենդանի է ծա-
ռայ քո: Բազմամեայ ծերութեանն ալիք եւեթ
վշտացուցանեն զնա:

Յովսէփ. — Եւ պատանիդ այդ Բենիամի՛ն է,
գորմէ դուք ասէիք:

Յոշոյա. — Այ՛ո՛, Տէ՛ր իմ, է՛ նա ինքն:

Յովսէփ. — Որդեակ... (անձ, և զիսորդ միձկի
սիրտ իմ ի նայելս ի նա)... ո՛վ որդեակ իմ,
երկինք շնորհեսցեն քեզ տեսնել զաւուրս
բարիս ի կեանս քո, և միշտ... (ո՛նձ Աւ-
տուած, և քանի՛ յուզմուշեր գորովանաց եւ)...
և միշտ... (արտասուքն արդէն յաչացս անձ-
րեւե, և ո՛չ կամիմ՝ այլ ևս սանձանարեղ. եր-
բայց այլուր ծածկել զնա):



Յոշոյա. Ծնաւուն. Բենիամի՛ն և այլ
կորարք Յովսէփայ:

Բենիամի՛ն. — Ա՞յսպէս թողու զմեզ:

Յոշոյա. — Ես ո՛չ կարացի հասու լինել եթէ
զինչ նշանակեն ընդհատ բարբառքն:

Ծնաւուն. — Ա՛հ, գորտմտութիւնն ընդ պատ-
րուակաւ մեղմացեալ զիմաց թագոյց ցայտ
վայր:

Յոշոյա. — Ո՞՞ զիտէ, որպիսի՞ վիճակ մեզ մնայ
պատրաստ:

Բենիամի՛ն. — Ո՛վ եղբարք, սօ՛ւր և զինչ տեղի
իս ձգեցիք, ածիք:

Ծնաւուն. — Այս պատիժ իրաւամբ և արդարու-
թեամբ գտանէ զմեզ: Արդ՝ վասն Յովսէփայ
վաճառելոյ՝ Աստուած զմեզ հարկանէ: Ոչինչ
օգտեցին նմա ողբն և՛ կական, և ո՛չ պաղա-
տանք և ո՛չ աղերսանք:

Յոշոյա. — Ընդ վայր ասացի ես յայնժամ զայն,
մի՛ մտանէք յարիւն մանկանդ: Արդ ի մէնջ
ինդրի այն արիւն:

Թանկերէ և սասցևալըն:

Թանկերէ. — Առ ինքն կոչէ զձեզ, ո՞վ հովիւք,
Տէրն իմ: Ընդ ձեզ ի միասին կամի այսօր
առնուլ զԿելակուր:

Շմառն. — Ո՞հ ինձ. դաւ է. դաւ ինչ է այս
վասն մեր. և ահա՛ լցեալ է:

Բենիստիկն. — Զինչ օր է այս բնաւ:

Յուդա. — Եւ զինչ կերակուր է այս:

Թանկերէ. — Ընդէ՛ր յամենայք, մի՛ այլ, հո-
վիւք, երթիցուք:

Կաս. — Ողորմեա՛ ժողովրդեան քո, ո՞վ Աս-
տուած Աբրահամու: Աստուած մեծ հօր
մերոյ Աբրահամու, մեղապարտ եմք, բայց
եմք ժողովուրդ քո: Աղէ՛. Աստուած մեր, մի
առներ ընդ մեզ զամենայն ըստ արդարութեան:
Բաբէ, և ո՞ կարիցէ ի մէջ կենդանեաց արդա-
րանալ առաջի երեսաց քոց: Եւ յո՞ մարթի-
ցէ փախչել յապաւիտութիւն ի բարկութենէ
քումմէ յողորմութիւն քո անսպառ: Ի քէն է՛,
Տէր, երկիւղ մեր. ի քէն է և աղբիւր յուսոյ
մերոյ. զի դու ես դատաւոր, բայց և հայր
միանգամայն:

(Եւ բազմիկ ի սեղան շուարեայ, և յետ
աշարտման ստէ)

Թանկերէ. — Բարեկամք. ահա՛ լցան բեռինք
ձեր. և պատրաստ կայ ամենայն ինչ. երթա՛յք,
և պատմեօջիք երախտագէտ մտօք հօր ձերում,
զբարութիւնսն՝ զոր արար ընդ ձեզ Տէրդ իմ:

ՎԱԽՃԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆԻ

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Յոլսեփի և Թանկերի

Յոլսեփի. — Թանկեթէ, կատարեցե՞ր զամենայն հրամանս իմ:

Թանկերի. — Այո՛, Տէ՛ր իմ. ամենայն ինչ կատարեալ է: Ետու յարմտեաց անտի որչափ ինչ ցանկային, և կարէին բառնալ զբառսք եբրայեցւոցդ, ըստ ձերումդ ակնարկութեան, և յայն մասն զոր ետու Բենիամինի՛ թագուցի զարծաթի բաժակն ձեր, զոր Դուք ըմպելի սեղանի և հմայել նովաւ ի յաջողութիւն սեղանակցացն ձերոց սովոր էիք: Հովիւքն անգէտ դաւոյն՝ ինդամիտ մեկնեցան աստի. բայց մի ոմն ի ծառայիցդ ձերոց պնդեցաւ զկնի նոցա ի բացուստ. և այն ինչ ելանեն նոքա արտաքոյ քան զքաղաքն ընդ դրունս նորին, հասցէ ի վերայ նոցա, և պահանջեցէ ի նոցանէ զհամար գողութեանն այնորիկ զրպարտելոյ, և որպէս մեղապարտս ածցէ զնոսաւ Ձեզ:

Յոլսեփի. — Ազնի՛ւ, զոր ինչ միանգամ պատուիրեցի քեզ՝ արարեր հաւատարմութեամբ,

բայց զի՞ է զի այդքան ապշուի՞ իւն ունի զքեզ: Թանկերք. — Տէ՛ր, և ո՞ երբէք ոչ կրթէր յապշուի՞ իւն յետին՝ առ այնչափ գործս ներհակակիրս միմեանց, զոր նշմարեմ ի ձեզ ցայս վայր: Տեսանեմ զՁեզ գորովագութ զայրագին, և միանգամայն զուարթ և դառնացեալ զոգցես ի նմին վայրկենի: Ժողովեալ իբրև զբարեկամս զորդիսն Յակովբայ, և ապա խոովեալ մեկնիք հեռանայք ի նոցանէ: Հրաւիրէք զնոսա ի սեղան ձեր արքայական, և ընդ նմին կարգէք զդարան ի վնաս նոցին: Անթիւ նշանօք խանդադատանաց զանազանէք զԲենիամին ի նոցանէ, և ի նոյն իսկ ի նա կամիք՝ զի անկցի փորձ թանգուզեալ յանցուածոյն:

Յովսէփի. — Չէ՛ քեզ անկ դեռ այժմ՝ գիտել զամենայն: Գնա՛ և ածցես ինձ զառաջեալ զհոփիւսն: Կուրօրէն հնազանդես՝ ջիր հրամանիս իմոյ. թէև մի՞ ին քեզ իցէ. և մի՛ թուիցի քեզ ծանր այս օրէնք: Իւրաքանչիւր անձն կարգեալ է ընդ այլով բարձրագոյն իշխանութեամբ. և այս է ըստ օրինացն Աստուծոյ, ուստի զնա արհամարհէ՛ որ վերնագունի իւրում ընդդէմ կայ:

Թանկերք. — Փոյթն իմ, Տէ՛ր իմ, չէ՛ յանդրգնական: Հարցեալ խօսեցայ. հրամայեալ լռե-

ցից: Ամենայն օրէնք Ձեր երկրպագելի են ինձ, և ոչ անգիտանամ զպարտիս վիճակին իմոյ. քաջ գիտեմ զի կորուսանէ զարդիւնս անկեղծ հնազանդութեան՝ որ կամի ընդ դատաստանաւարկանել զայն քննութիւն, քանզի անպատկառ յանդնութեամբ զանօրէնութիւնն յաւիտենական ի մոռացօսն արկանէ՛ որ ի վիճակ ծառայութեան թևակոխէ լինել դատաւոր:

Յովսէփի. — (միայն շնչ միայնուով): Գու որ զհոգոց մերոց քաջ նշմարես զգաղտնիս. ո՞՞ ճշմարտութիւն յաւիտենական, կարի՛ քաջ գիտես՝ եթէ չիք իմ բնաւ ցանկացեալ ինչ ընդդէմ որդւոցն Յակովբայ՝ եղբարցն իմոց, հոգւով վրէժխնդրութեան: Աղէ՛, ձեռն ամենակալ պահպանեսցէ զիս յայդպիսի անբարի ցանկութեանց, որք միշտ դառնան ի զլուս կամեցողաց իւրեանց, զոր նիւթել ընդդէմ հօրագունին թուի յիմարութիւն, ընդդէմ հաւասարին՝ վտանգ, և նուաստագունին՝ փոքրուցութիւն: Արտմտութիւնն՝ զոր յերեսս ցուցանեմ, ոչ խնդրէ, եթէ ոչ զեղբարցն զզիղ: Ես միայն ինդրեմ, զի ծանիցեն զչարն՝ յոր հասուցանէ յանցանք իմն, որպէս զի երկիւղն՝ զոր ի բարկութենէ կրեսցին՝ առաջնորդեսցէ նոցա առ յապայն ի գզուի՞ իւն: Վարեցայց

ես իբրեւ մայր զորովական՝ որ առ ամենայն
ինչ սպառնայ սիրեցելոյ որդւոյն, և երբէք ի
պատիժ ո՛չ ձեռնարկէ: Ամբառնայ միշտ զձեռն
ի խոցոտումն, այլ բնաւ ո՛չ իջանէ հարուածն,
զի սէր կապէ կաշկանդէ զայն անդէն:

Յովսէփ և Ասակեր.

Ասակեր. — Ա՛հ, Տէ՛ր իմ, դու ճշմարիտ ասա-
ցեր, այժմ էս իսկ ամբատանեմ զիմս զկարի
դիրամէտ բնութիւն:

Յովսէփ. — Զի՞ է, սիրեցեալդ իմ, զի՞նչ դի-
պաւ:

Ասակեր. — Ժամ է՛ արդ կրից բարկութեան
և արգարութեան: Հիւրքն այնոքիկ ապե-
րախտք, որք փոքր մի յառաջ մեկնեցան ի
մէնջ, զսրբագան բաժակն՝ որով Գուք սովոր
էիր ըմպել և հմայել, հնարեցան գողանալ:

Յովսէփ. — Զի՞նչ ասես, սիրեցեալդ իմ:

Ասակեր. — Այո՛ ճշմարիտ ասեմ, Տէրդ իմ,
ի ծառայիցդ քոց ոմանք պնդեցան զկնի նո-
ցա. ուրացան նոքա զառաջինն զայն յան-
ցանս՝ ստելով բազում բանիւք հաստատու-
թեան. մեռցի՛ր ասէին՝ ո՛ որ և իցէ յանցաւորն
ի մէնջ, և այլք ի գերութիւն մատնեցին

յեզիպտոս: Յուզեցան ամենայն ուրեք ի
պաշտօնէիցդ՝ և գտաւ բաժակն թագուցեալ ի
մէջ բեռանցն Բենիամինի: Անդէն կորուսին
յանցաւորքն զամենայն յոյս համարձակու-
թեան, ի դալուկն մահու հարեալք՝ արիւնք
սառեցան յերակս նոցա, և անբարբառք՝ և
ո՛չ ունելով ի բերանս իւրեանց զայլ պատաս-
խանի, լուծան՝ զեղան ամենեքին յարտասուս
դառնաղէտ ողբոց, և պատառէին զհանդերձս
իւրեանց առ հասարակ:

Յովսէփ. — Եւ ո՞ գիտէ, սիրեցեալդ իմ, եթէ
յանցաւորք իցեն:

Ասակեր. — Ուրեմն իմ բանք այդչափ հաւա-
տոց միայն են արդիւնականք:

Յովսէփ. — Գու փոքր ինչ յառաջ անմեղս գնու-
սա կարծէիր. այժմ հաստատես՝ եթէ խաբե-
ցար յայնժամ: Ո՞ գիտէ, սիրեցեալդ իմ, թե-
րևս յետ սակաւուց միւսանգամ ի նոյն զարձ
արարեալ ասիցես թէ խաբեցայ:

Ասակեր. — Տէ՛ր իմ արքայ, արդ հասին ի
ծագ բանք երկմտութեան քո:

Յովսէփ. — Եւ սակայն՝ սիրեցեալդ իմ, չեմք
բնաւ զգուշաւորք ըստ բաւականին: Հոգւոյն՝
որ յայս բանտ մարմնոյ կայ յարգելս, ան-
ծանօթ են նմա արտաքին առարկայք. զգայու-
թիւնք են պաշտօնեայքն՝ որք մատուցանեն
Յովս. Գեղեցիկ

հոգւոյն զայնս, որք և այնորիկ են խաբեբայք և կարի ընդունակք ստուծեան: Եթէ հոգին ըստ ծանօթութեանցն այնոցիկ դատի և արձակէ, կամ դատապարտէ զիմն, դատաստան նորա է՛ կասկածաւոր, և իբր ի բազումս սխալէ:

Ասակեր. — Ապա Տէ՛ր իմ, ըստ քո բանիցդ անսոյգ է միշտ միտք մարդոյ զճշմարտէն, և կեայ կուրորէն ի խաւար մթութեան:

Յովսէփ. — Այո, ի գուր վստահի գտանել զլոյս՝ եթէ ո՛չ խնդրէ զայն ի նմա՝ որ է մի միայն աղբիւր անայլայլելի և յաւիտենական. ի նմա՝ առաջին ծայրագոյն պատճառ ամենայն պատճառաց, որ ո՛չ բովանդակեալ՝ բովանդակէ զամենայն, յորում շարժի՝ կեայ և է իւրաքանչիւր ոք ի մէնջ, որ պարագրէ զամենայն բարի. լոյս է և բան, իմաստութիւն անբաւ, արդարութիւն, ճշմարտութիւն, փրկութիւն և կեանք:

Ասակեր. — Բար՛բէ, և ո՞ր ճառագայթ աստուածեղէն փայլատակէ ի դէմս, ի բարբառս յայտոսիկ, ո՛չ զիտեմ. զի՞նչ է՝ որ հնչեն յանկանջս իմ, որ թուի ինձ մահաոխիթ իմն գոյ: Սարսիմ ի լսելս, և մինչդեռ յատուածայինսն վերանաս, ո՞ր եմ ես, և ո՞, քանչեմ ճանաչեմ:

Թանկեր և Ասակերիկ

Թանկեր. — Ահա՛ Տէ՛ր իմ, յանցաւորքն:

Ասակեր. — Տէ՛ս, զհարգ գետնատարած կան առաջի քո:

Թանկեր. — Եւ չէ՛ որ ի նոսա՝ որ համարձակեսցի խօսել ինչ բանս:

Յովսէփ. — Այ յիմանքք, զի՞նչ է այս՝ զոր աբարիքդ. և միթէ անծանօթ էր ձեզ իմս արհեստ հմայելոյ:

Յուդա. — Զի՞նչ տացուք պատասխանի՝ տէ՛ր, զո՞ր իրաւունս ցուցցուք, կամ զորպիսի՞ ջատագովութեան բանս յառաջ բերցուք: Աստուած ծանեաւ և յիշեաց զանօրէնութիւնս մեր. այս է ժամն փոխարինելոյ զվճարն: Ո՛հ, Աստուած յաւիտենական, տեսանեմ զձեռն արդարակշիւ և վրէժխնդիր. և ի միտ առնում ընդդէմ մարդկայնոց մեղանաց զարդարութեան քո զգաղտնի յառաջատուութիւն: Զու նիմք ինչ ասել քեզ, ո՞վ Տէր, եթէ ո՛չ՝ մեք և առ որում գտաւ բաժակն, եղիցուք ծառայք տեառնդ մերում:

Յովսէփ. — Քաւ յինէն. մի՛ եղիցցի ինձ առնել զայդ, ո՛չ ներեսցեն երկինք՝ զի ես ցուցից զայդքան անաչառ խտութիւն: Բաժակն

գտաւ առ Բենիամինի, նա միայն կացցէ՛ առ իս ինձ ի ծառայ. և դուք դարձչիք ի տուն առ հայր ձեր:

Յոշուա. — Եւ ո՞ր դիմօք, Տէ՛ր իմ, երևեսցուք առաջի հօր մերոյ:

Բենիամին. — Ընդէ՛ր, Տէ՛ր իմ, ես միայն ունիմ մնալ ծառայ քեզ:

Յովսէփ. — Դու միայն, և այլք փութացին մեկնիլ աստի. էհ, արիք և երթա՛յք:

Բենիամին. — Ո՛ւր գնայք՞ եղբարք իմ. մի՛ երթայք... ո՛հ, Յուզա, ա՛յսպէս պահես զխոստմունս քո... գոնեայ մի՛ զլանայք ինձ գհրաժարականն ողջոյն և զեղբայրական գրկախառնութիւն... զայս ևս ո՛չ մնայք շնորհել... ո՛հ, հեռանայք աստի, և ես միայն մնամ աստ որք բանտարկեալ: Չի՛նչ ունիս սակ, ծնո՛ղդ յշտանար, մի՛նչ գիտացես... Դուք, եղբարք եմ, եթէ խանդաղատիք ի գութ ի վերայ թշուառ եղբօր ձերոյ, դուք զհայրական ձեռն համբուրեսչիք վասն իմ. ծանուցէ՛ք և եթ նմա թէ ես կենդանի եմ. ծանուցէ՛ք նմա զիմ սէր, բայց մի՛ ծանուցանէք՝ աղաչեմ... ո՛վ Աստուած, զվիճակն յորում գտանիմ:

Յովսէփ. — (խերիկն միայն)... Ժորժես սևճն իմ և ուսկառ ինչ:

Յոշուա. — Չիցէ՞ արդեօք, Տէ՛ր իմ, արժան

ունել մեզ զյոյս մեղմելոյ այլ ևս դուն ինչ զարդար ցատումն քո:

Յովսէփ. — Հրաման օրինաց է քեզ. արդ խօսեանց:

Յոշուա. — Յիս, Տէ՛ր. աղաչեմ երկայնամիտ լինել և խաղաղութեամբ լսել ինձ:

Յովսէփ. — Զի՛նչ ունիցիս ասել, լուիցուք:

Յոշուա. — Յիշես արդեօք, Տէ՛ր իմ, յորժամ զառաջինն եկի ես այսր առ քեզ:

Յովսէփ. — Գիտեմ այո՛՝ ածել առ իս պատուիրեցի ձեզ յայնժամ զԲենիամին: Դուք ետուք պատասխանի, եթէ հայրն ալեւոր մեռանի ի գրկիլն ի նմանէ. և ես կրկնեցի զի առանց մանկանն մի՛ ահն ունիցիք յանդիման լինել ինձ:

Յոշուա. — Ահա՛ այսու օրինօք, Տէ՛ր իմ, դարձաք մեք առ Յակովբ: Նա կամեցաւ միտանգամ առաքել զմեզ առ քո տէրութիւնդ. ընդունայն ճանապարհորդութիւնն՝ մեք պատասխանէաք նմա, եթէ Բենիամին ո՛չ եկեսցէ ընդ մեզ: Ո՛հ, զոչեաց նա, և զիմորդ անորդի մնացից ուրեմն: Եղո՛ւկ զիս, երկուս և եթ ծնաւ ինձ Հուսթէլ զորդիս սիրոյ. առաջինն ի ճարակ մատնեցաւ ժանեաց զազանաց, որ քաջայայտ է ձեզ: Դուք ինքնին ածէք ինձ զգոյժ աղետիցս, և այլ ո՛չ ևս յաւելի տեսանել զնա: Արդ՞ եթէ և զմիւսն թո-

ղից ի ձեռաց, և ի ճանապարհին արկած իմն չարադէպ գնա նկուն առնիցէ, ի վերջին ծագ մահուան վաղվաղեսցէ ծերութիւնս իմ: Բայց սոփն սաստկանայր գամ քան զգամ: Հայրն ցաւագին զի՞նչ ձեռնհաս էր առնել, եթէ զԲենիամին ոչ հեռացուցէ յինքնէ, քաղցն անդարման մատնեսցէ ի մահ զհամօրէն գերդաստանն. եթէ մեկնեսցի Բենիամին՝ կսկիծն անշուշտ ի դուռն հասուցէ գնա մահուն: Հայրդ սիրելի և վշտահար՝ համարձակեցայ ես ասել ցնա ի վախճանի, ստիպեալ յայտցիկ իրաց, տո՛ւր ինձ զեղբայրն իմ յերաշխի. ես պարտաւորեմ՝ զանձն իմ ամենայն հաստատութեամբ ածել գնա անդէն առ քեզ, և կացուցանել առաջի հօրդ: Հաւատա՛ ինձ՝ ասացի ցնա, եթէ առանց մանկանդ դարձայց այսր, առ յապոյն մինչև ցյաւիտեան յիս իբրև ի պարտաւոր հայեսցիս: Չիջա՛ նա ի բանս իմ, մեկնեցաք ի նմանէ ի կատարումն քոյին ակնարկութեանց: Գու ես հայր գաւազաց, եղեր ապաքէն նաև որդի. յանձին քում որոճա՛, ո՛վ Տէր, ի վայրկեան մի ժամանակի զկիրս սրտի իմոյ. ասա՛ որո՞վ երեսօք ես մարթացայց յանդիման լինել ձերունոյն այնորիկ առանց գրաւոյն հաւատացելոյ: Աղէ՛, մի լիցի այս, դարձցի Բենիամին առ Հայրն.

եւ կացից. ես միայն կամիմ մնալ ընդ անձին նորա. և այսու երջանիկ զիս համարիմ. քան թէ կալ թշուառաբար ի զննին հանդիսի հայրական աղէտից:

Յովսէփ. — (Իւրբէիկ) Սիրտ իմ գերակի, և յաղիւ ոգիքս ի գորով խանդադատուաց:

Յուդա. — Չմէ՞ արդէօք, Տէ՛ր իմ. թագուցանես յինէն զդէմս քո... Բաբէ վշտացս, եթէ չեմ ես արժանի զթութեան, զոնեա՛ հայեաց յարժանաւորութիւն անմխիթար աղեաց վըշտագնեալ հօրն: Ո՛հ, փափաքէի թէ անդ առաջիկայ լեալ էր Տէրութեանդ քո ի վերջին անդ հրաժարման, թուէր իմն այնպէս թէ կորզէին ի բաց ի նմանէ զսիրտ նորա, և սպանանէին գնա. երթիցես, ասէր, բարեալ, որդեակ, և դառնայր ի զիրկս արկանել նմա. էր զի ի մին, և էր զի ի միւսն ի մէջ կրկին և երեքկին յանձն առնէր. ձայնէր առ Հոսթէլ. ի յուշ ածէր զՅովսէփ, և զերկոսին նշմարէր ի Բենիամինի դէմս, և ի նոյն յիշատակէր զկորուստ իւր զամենայն... Վա՛հ... զիմրդ, Տէ՛ր իմ, և դու յարտասուս լուծանիս... ա՛հ. մերս թշուառութիւնք և զքեզ շարժեցին ի գութ. հայեաց, ո՛վ Աստուած, յայտոսիկ գորովական ամբոխմունս:

Յովսէփ. — (Իւրբէիկ). Ո՞ն, բա՛ւ է, ո՛չ ևս զօ-

րեւ չտայ տեղի ծովացեալ արտասուշացս, և զոչսոյ ունել: (Ապս բարձր Դայնիւ): Եղբարք իմ սիրելիք, ճանաչէք զարիւնն ձեր... կեղծեալն իմ խտտութիւն էառ զկատարումս... Եկայք մերձեցարուք առ իս. ես ինքն եմ Յովսէփ:

Յոշդա. — Յովսէփ...

Բեկիաւիկ. — Ո՛վ Աստուած յաւիտենական...

Շնաւուն. — Եղբուկ մեզ...

Թանկեր. — Ո՛վ նորանշան սքանչելեացս...

Աստեք. — Հիացումն ինչ է այս:

Յովսէփ. — Մի՛, եղբարք իմ, մի՛ ինչ երկնչիք, և յիշատակ անցելոց մի՛ ինչ զձեզ տազնապետցէ. նմին յանցանաց պարտի Եզիպտոս խոստովանել զկեանս իւր, և դուք զձերդ: Աստուած առաքեաց զիս յայս թագաւորութիւն առաջի ձեր ի փրկութիւն անձանց ձերոց: Արդ դարձէք, եղբարք իմ, դարձէք և փութացեալ ելէք առ հայրն իմ: Պատմեցէ՛ք նմա զամենայն զմեծութիւնս որդւոյ իւրոյ, և իջուցէք զնա այսր առ իս ամենայն տամբ իւրով: Ա՛հ, եղբարք իմ սիրեցեալք, դուք ընդէ՛ր այդպէս ի լուռ կայք... դեռ ո՛չ հաւատայք... Յուդա, տուր պատասխանի... Շմաւուն՝ արի՛, քաջալերեաց և մխիթար մատուցիր եղբարցս... Բենիամին, Բենեամին, մօտ եկ առ իս:

Աստեք. — Տեսեալ է քո երբէք, Թանկեթէ, տեսարան գորովաղէտ. տես, տես զհարգ ամենեքին զնովա խոնեալ՝ երկչոտք և խնդամիտք, զմիմեամբ ելանեն... ոմն զճակատն համբուրէ, ոմն զձեռոսն, և ոմն զհանդերձս նորա. իսկ նա ինքն կամի տալ զանձն ամենցուն միանգամայն... ոչ գիտեն յողել զբարբառ իւրեանց, և առ ծայրայեղ խնդութեան՝ փոխան խօսից՝ ողբան միաբերան: Ապկայն խօսին այն արտասուք, այո, արտայայտեն, և ճանաչեմ զայն... բաբէ՛, և քանի՛ ինչ տայ ինձ իմանալ այն խոր լուութիւն: Ճշմարիտն ուրախութիւն չունի պէտս յարտայայտումն չրթանց բարբառոյ:

Յոշդա. — Ո՛ անմեղ...

Շնաւուն. — Ո՛ բարբառող...

Բեկիաւիկ. — Ո՛վ երջանիկ Յովսէփ:

Յոշդա. — Ա՛հա՛, Տէ՛ր իմ, կատարեցան տեսիլք երագոց քոց:

Շնաւուն. — Բաբէ՛, նախատեսութիւն յաւիտենական. արդարեւ յիմարութիւն է առաջի քո մարդկայինս իմաստութիւն... վաճառեցար զՅովսէփ ոչ երկրպագանելոյ և եթ աղագաւ, և ահա երկրպագանեմք նմա վասն վաճառելոյն զնա:

Յոշդա. — Այսպէս ահաւասիկ տնօրինէ Աս-


տուած զիրս աշխարհի. զի նա առաւել ծառայ է նորին կամաց՝ որ ընդդէմ կայ այնմ: Յովսէփ. — Ի նորանշան յոլովմունս իմոյս բաղդի, սիրեցեալքդ իմ, թուի թէ գուցէ ի գաղտնիս առաւել իմն քան զոր է առ երեսս: Ես առաքեցայ առ ձեզ ի հօրէ իմմէ, որ սիրովն տոչորիւր որդւոցն իւրոց. և առ սիրոյն լոկոյ առաքէր զիս, և դուք դարանեցայք կենաց իմոց: Վաճառեցայ արծաթոյ ի ձեռս բարբարոսաց կարաւանին: Եւսայ եղէ յեզիպտոս, զրպարտեալ՝ ոչ պաշտպանեցի իմոյս անմեղութեան: Տարայ վշտաց՝ որք մնային դատախազին իմոյ: Կապեալ գտայ ի մէջ երկուց մեղապարտից, և գուշակեցի միոյն զմահ, և միւսոյն զփառս: Զհալածիչսն իմ ստացայ ինձ ի բարեկամ. ես մատակարարէի զպաշար կենաց՝ որոց մահ ինձ նիւթէին: Լսեմ ես ամենայն ուրեք զբանն, որ զիսն առձայնէ փըրկիչ աշխարհաց.... Ո՛վ անկարծ երկցս. և ուրո՞ջ իցեմ ես պատկեր... Արդարեւ գործ մեծ և սքանչելաւորաջ պատրաստի յերկինս, յորում գուցէ ստուեր իցէ Յովսէփ, և կերպարան ևսխատիպ....


Դաս Բագունականաց

Անմիտ է և անխորհուրդ՝ որ զծնունդ մարդկեղէն մտաց ընդդէմ դնէ խորհրդոցն Աստուծոյ, յորոգայթն՝ զոր լարեաց ոտիցն այլոց՝ ի նոյն ըմբռնեսցի, զոր և ձգեացն, և իմաստունն կնճոնցաւ ի նոյն: Այլ առաքինութիւնն ճշմարիտ որպէս զարմաւենի ուռճացեալ՝ առաւել ամէ ի զօրութիւն, մինչդեռ ի բարու նախն կեղեքի:

ՎԱՍԻՃԱՆ ՀԱՄԱԿ ՏԵՍԱԲԱՆԻՆ







Handwritten signature or mark, possibly "Hart".

2758

2013

